ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿ

ՔՐԻՍՏՈՍ ԱՒԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ԹՈՒՐՔԻՈՅ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ՔԱՀԱՆԱՅԻՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆՑ, ԵՒ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ:

Գոհութիւն եւ փառք Ամենախնամող մեր Աստծուն, որի կենարար հովանու ներքոյ, շէն ու պայծառ մեր աղօթքի Տները Սուրբ Հոգու շնորհներն են բաշխում մեր հաւատաւոր ժողովրդին ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի:

Երջանիկ ենք հաստատելու, թէ մեր երջանկայիշատակ եկեղեցական հայրերի հեղինակած ու կարգաւորած պաշտամունքային եւ սրբազան պատարագի արարողութիւնները մեր օրերին առաւել քաղցրանում ու ներշնչիչ են դառնում բազմաձայն ներդաշնակ երգեցողութիւններով: Սրբազան երաժշտութիւնը առանձին հմայք ու հոգեպարար շունչ է հաղորդում աղօթքի խօսքին: Այդպիսին է մանաւանդ մեծն Կոմիտաս վարդապետի պատարագի երաժշտութիւնը, գնահատուած թէ՛ մեր ժողովրդի եւ թէ այլազգի երաժշտագէտների կողմից իբրեւ բարձրարուեստ ստեղծագործութիւն: Մեր Եկեղեցում սիրուած ու գնահատուած է նաեւ Մակար Եկմալեանի պատարագը՝ քաղցրօրէն հնչող մեր եկեղեցիների կամարների ներքեւ:

Այսօր, Մենք մի բարի լուր ունենք բերելու բոլորիդ, որ մեր Եկեղեցին հարստացաւ պատարագի նոր յօրինուած մի երգեցողութեամբ, որի հեղինակն է շնորհալի երաժիշտ, երկար տարիներից ի վեր Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի հմուտ խմբավար Խորէն Մեխանջեանը:

Երեք տարիների տքնաջան աշխատանքի արդիւնք է սոյն գործը, յօրինուած հայ հոգեւոր երաժշտութեան ոգով, ազգային մելոսի զգացողութեամբ եւ հարազատ մեր եկեղեցական աւանդներին ու հոգեւոր մթնոլորտին:

Մենք մօտիկից հետեւած լինելով պատարագի սոյն երգեցողութեան ստեղծագործական ընթացքին եւ տեղեակ դառնալով Հայաստանի հեղինակա-

digitised by A.R.A.R.@

ւոր երաժշտագէտների բարձր գնահատանքին, այսու մեր կոնդակով արտօնում ենք եւ յանձնարարում մեր Եկեղեցու թեմական առաջնորդներին ու հոգեւոր հովիւներին, որ սոյն գործը ընդունելի տարբերակ նկատուի ցարդ նուիրագործուած՝ պատարագի երգեցողութեանց շարքին եւ կատարուի Հայաստանեայց Եկեղեցիներում իբրեւ խորհնեան պատարագ:

Մենք շնորհաւորում ենք հեղինակին եւ օրհնում նրա երաժշտական տաղանդի սոյն արգասիքը:

Թող հայոց աղօթքի տներում յաւերժ ազաս ու լուսաւոր ինչի սուրբ խօսքն ու երգը մեր անմման պատարագի խորհրդի:

"Սաղմոս ասացէք Աստուծոյ մերում, սաղմոս ասացէք թագաւորին մերում, սաղմոս ասացէք: Թագաւոր մեծ ի վերայ ամենայն երկրի Աստուած է, սաղմոս ասացէք նմա իմաստութեամբ" (Սաղմ. ԽԷ. 7-8): Ամէն:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 20 Հոկտեմբերի
1984 Փրկչական ամի,
եւ ի տումարիս Հայոց ՌՆԼԳ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
Հմր. 1982

digitised by A.R.A.R.@